իրացնել և կիրառել այն դեղերը, **որոնք գրանցված են Հայաստանի Հանրապետությունու**մ, և գնումների գործընթացը այս կարգավորման անշեղ կատարումից նույնպես չի կարող շեղվել:

Արդյունքում Դատարանը գտնում է, որ ինչպես վերաբերելի իրավակարգավորումների, այնպես էլ էլեկտրոնային աճուրդի հրավերի տեխնիկական բնութագրի բովանդակությունից հետևում է, որ գնման գործընթացը կազմակերպվել է **ՀՀ-ում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստր) ներառված դեղի ձեռքբերման համար, իսկ դեղերի՝ միայն փաստացի մատակարարման պահին գրանցված լինելու վերաբերյալ պնդումը չի բխում ոչ գործող կարգավորումների տառացի մեկնաբանությունից և բովանդակությունից,** ոչ էլեկտրոնային աճուրդի հրավերի տեխնիկական բնութագրի պահանջներից:

Ինչ վերաբերում է հայցվորի այն փաստարկին, որ կողմերի միջև կարող է կնքվել դեղի մատակարարման պայմանագիր, իսկ մատակարարման փուլում դեղն արդեն վերագրանցված կլինի, իսկ մատակարարման անհնարինության դեպքում պատասխանողը միևնույն է վնասներ չի կրի և կարող է «Գնումների մասին» օրենքով նախատեսված կարգով ստանալ հայտի ապահովման գումարը, Դատարանն արձանագրում է, որ վերը նշված պատճառաբանությունների ուժով հերքվում է նաև նշված փաստարկը, քանի որ պատվիրատուն, հայտարարելով գնման գործընթաց, նպատակ է հետապնդել սեղմ ժամկետներում և սեղմ ռեսուրսներ ծախսելով, ձեռք բերել անհրաժեշտ խմբաքանակ, որպիսի պայմաններում դեղի վերագրանցման փուլում լինելու հանգամանքը չի կարող քննարկվող հարցի այլ լուծում պայմանավորել, նաև այն հանգամանքի հաշվառմամբ որ «Դեղերի մասին» օրենքը նախատեսում է նաև վերագրանցման փուլում մերժման հնարավորությունը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Դատարանը եզրահանգում է, որ հայցն անհիմն է և ենթակա է մերժման:

5.1. Դատական ծախսերի բաշխման հարցը: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Հաշվի առնելով հայցվորի կողմից պետական տուրքը նախապես վճարած լինելու և հայցը մերժվելու հանգամանքները՝ Դատարանը դատական ծախսերի բաշխման հարցը համարում է լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ, 101-րդ, 109-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 234.12, 360-րդ և 362-րդ հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. Մերժել «ԼԵՅԿՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցն ընդդեմ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամի»՝ թիվ ԷԱՃԱՊՁԲ-2024/4-3-ԵՊԲՀ ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.03.2024թ.-ի թիվ 3 արձանագրության 2-րդ կետով «Լեյկո» ՍՊԸ-ի կողմից երկայացված հայտը 8-րդ չափաբաժնի մասով անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան:

ԴԱՏԱՎՈՐ՝ **ԳՈՀԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am